

POTTER'S WHEEL AND POTTERY WORKSHOP OF LORUT

V. V. Avetyan

On the territory of Lori region in Armenia, for the first time we found a potter's wheel and pottery workshop with all the technological departments referring to the early bronze age (3rd millenium B.C.). In the same place some objects and materials were found, as well as remains of the clean grain.

ԼՐԱՇԵՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Վ. Վ. ԱՎԵՏՅԱՆ

ԳՊՀ պրոֆեսոր

«Իսկ Գեղամը... գնաց արևելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետևի կողմը, մի ծովակի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները՝ Գեղարքունի, ինչպես նաև կոչվում է ծովը: Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեզ ու թիկնավետ, վայելչակազմ, կորովախոս գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ մարդիկ իբրև ծառա և նրա ժառանգության սահման է կտրում ծովից դեպի արևելք մինչև մի դաշտ, որտեղ Երասխը, սեպացած լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով ահագին շառաչունով թափվում է դաշտը: Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով և աշխարհը իր անունով կոչում է Սյունիք»:

Այս կարևոր հիշատակությունը, որը քաղվել է պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից, ունի պատմական արժանահավատ հիմք, որը հաստատվում է բազմաթիվ հուշարձանների, սեպագիր արձանագրությունների ու այլևայլ կոթողների տվյալներով:

Գեղամա և Սյունիքի լեռներից հայտնաբերված հազարավոր ժայռապատկերները, ջրի, պտղաբերության, առատության խորհրդանիշ համարվող «վիշապաքար» կոթողները նույնպես այդ են վկայում:

1983 թվականի աշնանը Գեղամա լեռների Գեղ լեռան դիմաց, նորերս Աղավնասար կոչված լեռնաբազուկի թեք լանջին, հայտնաբերվեցին դեմքերով դեպի արևելք և հարավ նայող, ամբողջական ժայռաբեկորներից կերտված երկու մարդու հսկա կիսանդրիներ: Թեև հազարամյակների ընթացքում բնության քայքայիչ ուժը իր կնիքն է դրել դրանց վրա, սակայն բավականաչափ ընդգծված նկատելի են աղեղնաձև հոնքեր, հեռուն բևեռված աչքեր, բեղ ու մորուք, կլոր սաղավարտ և այլ մանրամասներ: Նախնական ուսումնասիրությունների հիման վրա այն միտքն է հայտնվել, որ դրանցից արևելահայաց դեմքովը կարող է լինել Սիսակը, իսկ հյուսիսահայացը՝ Գեղամ նահապետը:

Գեղամ նահապետին վերագրվող տապանաքար կա Նորատուսի հին գերեզմանոցի նշանավոր խաչքարերի մեջ, վերջինս թեև ուշ շրջանի, միջնադարի տապանաքար է, բայց կարևորն այն է, որ ժողովուրդը ավանդաբար պահպանել է

Ուսումնական հաստատությունները և նրան վերագրել մի շարք տեղանուններ և լիճը:

Ինչպես պարզվում է հնագիտական նյութերի և սեպագիր արձանագրությունների տվյալներից, Գեղարքունիքը՝ Սևանի ավազանը, սկսած հնագույն ժամանակներից եղել է շեն ու խիտ բնակեցված վայր: Այդ են վկայում հարյուրավոր հնագիտական նյութերի տվյալները:

Անցած ավելի քան 150 տարիների ընթացքում Հայկական լեռնաշխարհի տարբեր մարզերում հայտնաբերվեցին նախնադարյան համայնական հասարակության ժամանակաշրջանի հազարավոր հուշարձաններ՝ բնակատեղիներ, բերդ-ամրոցներ, դամբարանադաշտեր, նյութական մշակույթի այլևայլ արձասիքներ, որոնք, պատմագիտական գրավոր հիշատակարանների բացակայության պայմաններում, Հայաստանի հնագույն մշակույթի ու պատմության, մեր նախնիների կենցաղի ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար ունեն բացառիկ նշանակություն և եզակի սկզբնաղբյուրի դեր:

Հայտնաբերված հին հուշարձանների շարքում կան այնպիսիները, որոնց համբավը վաղուց դուրս է եկել մեր երկրի սահմաններից և կարևոր նշանակություն ստացել Կովկասի և Մերձավոր Արևելքի նախնադարյան ու վաղ պետական մշակույթի պրոբլեմային հարցերի ուսումնասիրման բնագավառում:

Դրանց մեջ իրենց զգալի քանակով, բազմազանությամբ, հարստությամբ և ժամանակաշրջանի ընդգրկումով առանձնահատուկ տեղ են գրավում Սևանի ավազանի, հատկապես Լճաշեն գյուղի հուշարձանները, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ուրվագծելու Հայաստանի նախնադարյան համայնական կարգերի ավելի քան երեք հազարամյա պատմությունը, ինչպես նաև նպաստում է հայ ժողովրդի ծագումնաբանության հարցերի ու վաղ հայկական մշակույթի բուն արմատներն ու ակունքները բացահայտելու գործին:

Ընդհանրապես հայկական բարձրավանդակն ընդգրկում է պատմամշակութային զարգացման միասնական մի հսկա օջախ, որը հաստատվում է առանձին, լոկալ կենտրոնների մշակույթի պատմության բոլոր փուլերի ուսումնասիրման միջոցով: Այս առումով հազիվ թե հնարավոր լինի թերագնահատել Լճաշենի դերը:

Լճաշենի տարածքից տասնամյակների ընթացքում հայտնաբերվել են նախապատմական շրջանի բնակատեղիներ, բերդ-ամրոցներ, դամբարանադաշտեր ու առանձին կոթողներ, որոնք վերաբերում են մ.թ.ա. 3-1 հազարամյակներին: Տարիների ընթացքում հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված բազմահարուստ նյութի ուսումնասիրություններից պարզվել է, որ ավելի քան հինգ հազար տարի առաջ Լճաշենի տարածքում, նաև՝ ամբողջ Սևանի ավազանում, նախկին կիսաքոչվոր, անասնապահ և որսորդությամբ զբաղվող ցեղերը, որոնց մասին արժեքավոր տեղեկություններ ենք քաղում Գեղամա և Վարդենիսի լեռների 6-1 հազարամյակների ժայռապատկերներից, անցնելով նստակյաց կյանքի և մշտական բնակության, սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից ստեղծել են մեկը մյուսին հաջորդող, զարգացման մի աստիճանից մյուսին՝ ավելի կատարյալին անցնող մշակույթ, որը ծաղկման է հասել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին:

Սևանի ավազանը վաղուց է արժանացել գիտնականների և ճանապարհորդների ուշադրությանը: Շատերն են զբաղվել Սևանի ավազանով և առանձին բնագավառներ դարձրել ուսումնասիրությունների առարկա:

19-րդ դարի կեսերից բուռն հետաքրքրություն է առաջանում հատկապես հին հուշարձանների նկատմամբ: Այդ բնագավառի առանձին ուսումնասիրողներից են Էջմիածնի միաբանության անդամ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, ռուս նշանավոր հնագետներ Մ. Վ. Նիկոլսկին, Ի. Ս. Պոլյակովը, Ա. Ա. Իվանովսկին, որոնք զգալի աշխատանք կատարեցին հին հուշարձանների հայտնաբերման, ավազանի սեպագիր արձանագրությունների հավաքման, հրատարակման, ինչպես նաև դրանց վերծանման փորձեր կատարելու ուղղությամբ:

20-րդ դարի սկզբին անվանի ազգագրագետ, բանահավաք ու հնագետ Երվանդ Լալայանը ձեռնամուխ եղավ հին հուշարձանների ծավալուն ուսումնասիրությունների գործին: Նա հնագիտական պեղումներ կատարեց ավազանի մի շարք հնավայրերում՝ Սևանի շրջանի Օրդակլու (ներկայիս Լճաշեն), Թուխ մանուկներ, նախկին Կամոյի շրջանի Պատաշար, Մրթղի ծոր, Չնգիլներ, Մարտունու շրջանի Ներքին և Վերին Գետաշեն գյուղերի տարածքում, Ղարանլուղում (Մարտունի) և այլուր, բացելով 516 դամբարաններ: Նա պեղումներ կատարեց նաև հին բնակավայրերում: Պեղումների ժամանակ հայտնաբերվեցին բրոնզե դարի և երկաթի լայն յուրացման ժամանակաշրջանի ուշագրավ հուշարձաններ, բազմահարուստ նյութեր: Նա պեղումների ժամանակ առաջին անգամ հայտնաբերել քառանիվ փայտե սայլ:

Նշանակալից են Թագ. Ավդալբեկյանի, Բ. Բ. Պիտրովսկու, Գ. Ա. Գյոզալյանի, Ն. Մ. Տոկարսկու, Մեշչանինովի, Սեդրակ Բարխուդարյանի հնագիտական ուսումնասիրությունները, որոնց ընթացքում նրանք անդրադարձան առանձին հարցերի լուսաբանմանը և փաստորեն հիմք դրեցին հետագա հնագիտական աշխատանքների ուղղություններին:

Սևանի ավազանի նախապատմական ժամանակների հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվել է նաև անվանի հնագետ, պրոֆեսոր Հարություն Մարտիրոսյանը, որի ավանդը անշուշտ մեծ է հնագիտական նյութերի ժամանակագրման, հատկապես Գեղամա ու Վարդենիսի լեռների ժայռապատկերների հավաքման ու նախնական ուսումնասիրման գործում:

Առանձնապես արժեքավոր ու արդյունավետ են եղել Հարություն Մնացականյանի պեղումները: Նա պեղումներ է կատարել Սևանի ավազանի բազմաթիվ հնավայրերում՝ Ցամաքաբերդում, Սևան քաաքի տարածքում, Նորաշենում, Մուխանում (Ծովազարդ), Այրիվանում, Աստղածորում, Լիճքում, Շորժայում և այլն: Սակայն առավել նշանավորը Սևանի շրջանի Լճաշեն գյուղի տարածքում կատարած պեղումներն էին, որին Մնացականյանը ձեռնամուխ եղավ 1950-ական թվականներին և շարունակեց մինչև իր կյանքի վերջը՝ յոթանասունական թվականները: Նրա ղեկավարած արշավախմբի կազմում շատերն են աշխատել, առավել ակտիվ մասնակցություն են ունեցել Գեղեոն Միքայելյանը, Թելման Խաչատրյանը, Ստեփան Եսայանը, Էմմա Խանգադյանը, Հասմիկ Իսրայելյանը և ուրիշներ:

Անուրանալի է Մնացականյանի վաստակը: Նա տարիներ շարունակ պեղեց և հսկայական նյութ հայտնաբերեց Լճաշենի հին դամբարաններից, բնակատեղիներից ու Կիկլոսյան ամրոցների տարածքից, դրանք դասակարգեց, խմբավորեց, հետազոտեց և հրատարակեց գիտական արժեքավոր հոդվածներ:

Պեղումների ժամանակ Լճաշեն գյուղի առափնյա տարածություններում, նաև

լճի ջրերից վերջին ժամանակներս ցամաքած վայրերում հայտնաբերված հարյուրավոր դամբարաններից՝ կուրգաններից, կրոնլեխներից (չրջանաքարային դամբարաններ), քարարկղներից, բնակատեղիների ավերակներից, նաև ժայռոտ բարձունքներում փռված Կիկլոսյան՝ Մեծաքարային ամրոցներից ու այլ կառույցներից ձեռք բերված նյութերը հսկայական նշանակություն ունեցան նախնադարյան հասարակության պատմության մութ և կնճռոտ հարցերի լուսաբանման համար:

Հանրահայտ են Լճաշենի դամբարանաբլուրներից գտնված երկանիվ ու քառանիվ փայտե սայլերը, ճաղավոր անիվներով ռազմակառքերը, դրանք ունեն բարդ կառուցվածք և պատրաստվել են հմուտ ձեռքով ու բարձր որակով: Սայլերի մի մասն ունեն կամարածև ծածկ, մյուսները՝ կողքերից ցանցածև պատեր, իսկ թափքի տախտակներից շատերը պատված են նուրբ փորագրազարդերով: Այս քանակի և որակի սայլեր առայժմ չեն գտնվել որևէ հնավայրից:

Հանրահայտ են նաև բրոնզից պատրաստված զենքի տեսակները՝ եռանկյունածև, զարդարուն պատյաններով դաշույնները, որոնք գիտական գրականության մեջ ճանաչում են գտել որպես լճաշենյան տիպի դաշույններ, սրերը, նիզակները, նետասլաքները և անդրկովկասյան տիպի սակերը, ռազմակառքերի մանրակերտերը, որոնցում հստակ նկատելի է կառքը վարող սաղավարտակիր ռազմիկների հանդերձանքը: Աշխատանքային գործիքներից կարևոր են կացինները, եղանները, դրերը, կեռերը կտրիչ ու ծակիչ գործիքները: Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում պերճանքի առարկաներից ապարանջանները, գինդերը, մատանիներն ու մանյակները, ճակատակալներն ու կրծքազարդերը, մագախիլները, վարսակալներն ու հերազարդերը, զարդակոճակներն ու կախիչները, միայն դրանց թվարկումը մեծ ժամանակ կպահանջեր: Մի առանձին խումբ են կազմում արվեստի հիանալի մուշներ հանդիսացող բրոնզե գոտիները, ցուլերի, եղջերուների, այծի, առյուծի, թռչունների արձանիկները, զանգակներն ու այլևայլ առարկաներ: Քիչ չեն նաև արծաթից, ոսկուց, անագից, ծարիրից պատրաստված զարդերն ու երկնային մարմինները պատկերող առարկաները:

Հնագիտության համար հատկապես մեծ արժեք են ներկայացնում կավամանները, որոնցից Լճաշենում հայտնաբերվել են տասնյակ հարյուրավոր օրինակներ:

Հետաքրքիրն այն է, որ կավամանների մի քանի տեսակները եզակի են, ինքնատիպ և զուտ տեղական արտադրանքի արգասիք: Բարձր ճաշակով ու հմտորեն պատրաստված երկգույն ու եռագույն խեցեղենը, պաշտամունքային նշանակության անոթները կարող են լինել ցանկացած հռչակավոր թանգարանի նշանավոր զարդերը: Հազարների են հասնում նաև ազաթից, սարդիոնից, դաշտային շաղախից զեղեցիկ, ձևավոր և նրբորեն մշակված ուլունքները:

Առանձին բացառություններով, գրեթե բոլոր դամբարաններում գտնվել են մարդկանց կմախքներ, որոնք այնքան կարևոր են այդ մշակույթը կերտող ցեղերի էթնիկական կազմը որոշելու տեսակետից: Որպես կանոն, բոլոր դամբարանային թաղումներում գտնվել են ամբողջական կենդանիների կամ նրանց ոսկորների մնացորդներ, որոնցով, այլևայլ հարցերի հետ, պարզվում են, կենդանիների տեսակների, անասնապահության, որսորդության ու պաշտամունքի հետ կապված զանազան հարցեր:

Այս բոլորն ունեն պատմագիտական, գեղարվեստական-կիրառական մեծ նշանակություն:

Լճաշենի հնավայրերից հայտնաբերված հարյուրավոր նյութեր զարդարում են Հայաստանի պատմության պետական, Ս. Պետերբուրգի Էրմիտաժի և բազմաթիվ փոքր ու մեծ թանգարանների ցուցասրահները:

Հայտնաբերված նյութերով կարելի է լիարժեք պատկերացում կազմել ոչ միայն այդ անկրկնելի մշակույթը կերտող ցեղերի երեքհազարամյա ստեղծագործական մտքի ու աշխատանքի, այլև հայկական լեռնաշխարհի ու հարևան երկրների նույն ժամանակաշրջանի նյութական մշակույթի զարգացման ուղիների պատմության մասին:

Մինչ Սևանի շրջանի Լճաշենի հուշարձանների մասշտաբային պեղումները, Հայաստանի բրոնզի դարաշրջանի վերաբերյալ եղած նյութերը խիստ սակավ էին և գտնվել էին տարբեր հնավայրերից: Հայտնաբերված և ուսումնասիրված չէր այնպիսի մի հուշարձան, որն իր մեջ ընդգրկեր բրոնզի դարաշրջանի նյութական մշակույթի զարգացման բոլոր փուլերը և պարզաբաներ ժամանակաշրջանի, այսինքն՝ մ.թ.ա. 3-1 հազարամյակների լիակատար պատկերը: Այդ էական բացը, որը հնագիտության համար ունի չաազանց կարևոր նշանակություն, լրացվեց Լճաշենի հնագույն բնակավայրերի, Կիկլոպյան ամրոցների և դամբարանների պեղումներով հայտնաբերված հարուստ նյութերով: Լճաշենի տարածքից հայտնաբերված և ուսումնասիրված հուշարձաններն ըստ էության լիակատար պատկերացում են տալիս Հայաստանի բրոնզի և երկաթի դարաշրջանների՝ մ.թ.ա. 3-1 հազարամյակների բնիկ ցեղերի և ցեղային միությունների, նույնիսկ ձևավորված ու հզորության հասած Հայաստանի տարածքի առաջին ստրկատիրական պետության մ.թ.ա. 9-7-րդ դդ. մշակույթի, կենցաղի, սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների պատմության վերաբերյալ:

Սևանի ավազանի մշակույթի հայտնաբերումով վերացվեցին Հայաստանի բրոնզի դարաշրջանի ընդհանրական պատմության շղթայի բաց մնացած և թույլ օղակները, դրանով իսկ հնարավոր դարձավ ստեղծելու Հայաստանի բրոնզի դարաշրջանի կուռ պատմությունը:

Ավելին, Լճաշենի նյութական մշակույթի գոյությամբ մեկ անգամ ևս հաստատվեց, որ Հայկական լեռնաշխարհում նույնպես, ինչպես Հին Արևելքի երկրներում, հազարամյակներ շարունակ միևնույն վայրում անընդմեջ ապրել ու ստեղծագործել է մարդը և հետագա սերունդներին թողել բազմակողմանի զարգացած, հարուստ մշակույթ:

Այդ իմաստով կարելի է ասել, որ Սևանի ավազանի, հատկապես Լճաշենի նյութական մշակույթը Հայկական լեռնաշխարհի, նաև Անդրկովկասի բրոնզի դարի պատմության ուսումնասիրման համար ունի այնպիսի վճռական դեր, ինչպիսիք ժամանակին ունեցել են Շենգավիթի մշակույթը՝ Անդրկովկասի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի նյութական մշակույթի, Բաղարին՝ Հին Եգիպտոսի, Հարրապեն ու Մուհենջո-Դարոն՝ Հնդկաստանի հնագույն պատմության ուսումնասիրման համար: Այդ մշակույթը ունենալով տեղական հիմք, զարգացել ու կատարելագործվել է ինչպես հարևան, այնպես էլ հեռավոր երկրների՝ Հին Իրանի, Առաջավոր Ասիայի, Միջագետքի, Հնդկաստանի և այլոց հետ ունեցած հարաբերությունների ու երկարատև շփումների պայմաններում: Բայց և ստեղծվել է զարգա-

ցած ու ինքնատիպ մի այնպիսի մշակույթ, որի տարրերը հանդես են գալիս Անդրկովկասի մշակույթում, հիմք դառնում հայկական մշակույթի ակունքների համար ու հարատևում մինչև իսկ մեր օրերը:

Ուշագրավ են ու միաժամանակ բնորոշ ճարտարապետական կառույցների, շինարարական արվեստի սկզբունքների, կենցաղային օգտագործման իրերի, աշխատանքային շատ գործիքների, նաև սովորության նորմերի հնից եկող որոշ ձևեր, որոնք իրենց կենսունակությամբ և կիրառական նպատակահարմարությամբ ապրել են դարեր ու հասել մեր ժամանակները:

Այսպես, Լճաշենի Իշտիկունիի Կիկլոպյան ամրոցում բացված մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներին վերաբերող հին բնակարանների, ինչպես նաև կուրգանային տիպի դամբարանների ծածկածներում, որոնք զուգահեռներ ունեն Օշականի, այսպես կոչված, «հսկաների տներ» և Սիսիանի «Ղոքունդաշ» կամ «քարացած զինվորներ» հնավայրերի կառույցների ծածկածների հետ, նկատելի են հազարաշեն կամ դուբաշեն ծածկածների նախնական գծերը, որոնց հետագա զարգացումը հանգել է գմբեթավոր ծածկի գաղափարին: Այսօր էլ Հայաստանի տարբեր գյուղերի հին տներում՝ օբաներում, պահպանվել են այդ ծածկածների նույնատիպ կամ զարգացած տարբերակները: Այն կարելի է տեսնել Թումանյանի շրջանի Շնող գյուղում, Նոյեմբերյանի, Իջևանի, Սևանի ու նախկին Կամոյի, Մարտունու, Վայքի շրջաններում: Տիպիկ օրինակ կարող են լինել Մարտունու շրջանի Քոչաքարի հացատները, որոնք միանգամայն անխաթար ձևով են պահպանվել:

Ինչպես ասվեց, Լճաշենից հայտնաբերվել են երկու տասնյակի հասնող քառանիվ ու երկանիվ փայտե սայլեր, ճաղավոր անիվներով ռազմականքեր, որոնց հնագույնը վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին: Զխորանալով այն մանրամասների մեջ, որ սայլագործ վարպետները հիանալի ձևով են տիրապետել փայտի տեխնիկական հատկություններին, և սայլի տարբեր մասեր՝ անիվները, սռնին, առեղը, լուծը, թափքի տախտակները, պատրաստել են տարբեր ծառատեսակներից՝ կաղնի, թեղի, տիս-կարմիր փայտ, որպիսիք այն ժամանակ աճելիս են եղել Սևանի ավազանում, մշենք, որ սայլի այդ տեսակները դարեր ու հազարամյակներ շարունակ գործածվել են հայկական լեռնաշխարհում և հասել մեր օրերը:

Հանդիպում են նաև խեցեգործական արտադրանքի շատ նմուշներ՝ կարասներ, կճուճներ, թաղարներ, կովկիթներ, գավաթներ, թասեր, աղամաններ և այլն, որոնց նմանակները կարելի է տեսնել հայկական կենցաղում անընդմեջ, մինչև իսկ այսօր:

Լճաշենի Կիկլոպյան ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին մետաղահալոց երկու հնոցներ, միմյանցից չորս մետր հեռավորության վրա. դրանցից մեկը շարված է եղել մանր քարերով, որում, պահպանվել է 15 սմ հաստությամբ մոխրի շերտ, իսկ մյուսում, որը շարված է համեմատաբար մեծ քարերով, մոխրաշերտը համեմատաբար բարակ է: Վերջինիս միջից, այսինքն՝ մեծ հնոցից գտնվել են երկաթի անմշակ երեք բեկոր, երկաթի խարամ, փայտածխի մանր ու մեծ բեկորներ: Ինչպես երևում է՝ երկաթի ձուլման համար օգտագործվել է փայտածուխը:

Մյուս մետաղածուլական փոքր վառարանից (հնոցից) գտնվել են հաստ պա-

տերով, կոպիտ ձևով պատրաստված կավամանի բեկորներ, որոնցից երկուսի վրա եղել է երկուական անցք, հավանաբար ձուլվածքի արտաթորման համար: Ձուլարանների մոտից գտնվել է նաև կոպիտ գավաթանման անոթ՝ ներսից շիկացած վարդակարմիր տեսքով, իսկ դրսից՝ այրված ու սևացած, որը նույնպես ձուլոց է:

Այսպիսով, հնոցի պատերի առկայությունը, երկաթի անմշակ բեկորները, երկաթի խարամը, մոխրի ու փայտածուխի մնացորդներն ու հալոցքաթասերի առկայությունը անժխտելի ապացույցներ են տեղում երկաթի ձուլման ու մշակման:

Մասնագետների կարծիքով փոքր վառարան-հնոցում այրել են, փխրուն դարձրել, իսկ մյուսում՝ մեծում, այրված հանքաքարը հալել են, ձուլել:

Մետաղահալոց վառարանների սենյակներից գտնվել են մ.թ.ա. 13-12-րդ դարերին պատկանող կավամանների տասնյակ բեկորներ, որոնք կավի որակով, գույներով, փայլով և, որ կարևորն է, նախշազարդերի տեսակներով ու կատարման ոճով նման են Լճաշենի նույն ժամանակաշրջանին պատկանող քառանիվ ու երկանիվ սայլեր պարունակող դամբարաններից հայտնաբերված խեցեղենին: Դրանով իսկ հաստատվում է, որ բացված սենյակը՝ արհեստանոցը, մետաղահալոց վառարանների հետ միասին, կառուցվել է մ.թ.ա. 14-13-րդ դարերում:

Մինչև այժմ մեզ հայտնի չեն նշված դարերին պատկանող ոչ միայն մետաղահալոց վառարաններ, այլև որևէ ծանրակշիռ փաստ այն մասին, որ 14-12-րդ դարերում երկաթի մշակույթով զբաղած լինեին Հայաստանի տարածքում:

Գտնված մետաղածուլական վառարանների փաստն ունի չափազանց կարևոր, նույնիսկ, կարելի է ասել, առաջնակարգ նշանակություն՝ տեղում՝ Լճաշենում և ընդհանրապես Հայաստանում ու Անդրկովկասում մետաղի ինդուստրիայի զարգացման պատմության ուսումնասիրման համար:

Առայժմ Լճաշենին լրացնում է Մեծամորը, որտեղ մ.թ.ա. 10-9-րդ դարերում եղել է մասնագիտացված մետաղածուլարան՝ բարձր տեխնոլոգիայով:

Մինչև այժմ Հայաստանի տարածքում պղնձածուլական հնոցներ նույնպես չեն հայտնաբերվել, սակայն մի քանի հնավայրերում, որոնք ընդհանրապես հեռու են գտնվում պղնձի հանքերից՝ Մուխաննաթ-թափա, Շենգավիթ, Կարմիր բլուր, Գյումրի, Արթիկ, նաև հանքերին մոտ՝ Կապան, Ալավերդի, Ախթալա, գտնվել են քարից և կավից պատրաստված կաղապաներ, որոնք անժխտելի ապացույցներ են տեղում պղնձի ձուլման և բրոնզի ստացման համար:

Հինքեր կային մտածելու, որ Սևանի ավազանում նույնպես հնագույն ժամանակներում զբաղված լինեին պղնձի ինդուստրիայով, մանավանդ, որ պեղումների ժամանակ հայտնաբերված պղնձե և բրոնզե բազմաթիվ իրեր կրում են կաղապարման կնիք, դրոշմ: Եվ ահա Լճաշենի Կիկլոսյան ամրոցի միջնաբերդի նո. 6, 89 սենյակ-արհեստանոցի հատակին՝ հավասար խորության մեջ, բացվեց հաստ ու կոպիտ պատերով, նույնպես կոպիտ գոտեզարդ կավե հնոց, որը նման է ներքևը լայն, վերևը նեղ հնոցի:

Ներքևի մասում այն ունի կամարածև կտրվածք, որն արտաքնապես անհարթ է և սև գույնի: Ներսի պատերը շիկացած ու այրված են: Մինչդեռ պարզվել է, որ հնոցի վրա դրվել են մետաղով լցված հալոցներ:

Սոտավորապես նույն սկզբունքով է պատրաստված Դվինի միջնաբերդում 1948 թվականին հայտնաբերված հողե (կավահող) պատերով հնոցը, որի վրա

դրվել է հալոցը:

Այսպիսով, կարելի է համոզմունք հայտնել, որ մ.թ.ա. 9-րդ հազարամյակի սկզբին Լճաշենում եղել է պղնձածուլական հնոց, որը հաստատվում է նաև նույն հնագիտական շերտից հայտնաբերված բազմաթիվ կավամանների և այլ առարկաների մնացորդներով:

Մեկ ուրիշ, ոչ պակաս հետաքրքրություն նեկայացնող փաստ: Վերջերս Վարդենիսի շրջանի Ջոդի ոսկու և Լճաշենի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված ոսկե իրերի սպեկտրալ անալիզի տվյալներով պարզվել է, որ դրանք միանգամայն համապատասխանում են իրար, այն էլ՝ մեծ ճշտությամբ: Դա երևում է ոսկու բաղադրության մեջ մտնող աննշան քանակի էլեմենտների՝ արծաթի, մելիհի, թելուրի, արսենի, բիսմուտի և ոսկու քնակի տվյալներից:

Դրանով իսկ պարզվում է, որ Ջոդի ոսկին Լճաշենի հնաբնիկներն օգտագործել են մ.թ.ա. 13-12-րդ դարերում: Կնշանակի՝ Սևանի ավազանում եղել են զարգացած տեխնոլոգիայով մետաղամշակման արհեստանոցներ:

Տարակույս չի նեկ չի կարող, որ Սևանի ավազանը, այդ թվում՝ հատկապես Լճաշենը, պետք է համարվի Հայաստանի տարածքի հնագույն մետաղամշակման կենտրոններից, օջախներից մեկը, արհեստի մի կարևոր և զարգացած բնագավառ, որը շարունակվել է հետագա դարերում և դարձել մեր ժողովրդի, հայ ժողովրդի ժառանգական կարևոր զբաղմունքներից մեկը:

Կարևոր գյուտերից են Լճաշենի դամբարանային պեղումներից հայտնաբերված նորատիպ փայտե աղեղներն ու նետասլաքներով կապարճները:

Մինչև այժմ հնագույն աղեղի մասին մենք պատկերացում ենք ունեցել ժայռապատկերների, բրոնզե գոտիների, վահանների և այլ իրերի վրա եղած նկարներից: Կոնկրետ աղեղներ չէին գտնվել:

Լճաշենից հայտնաբերվեցին զարդարուն աղեղներ, որոնց բացվածքի մեծությունը 1-1,5 մետրի է հասնում: Դրանք կենտրոնական մասում հաստ են և աստիճանաբար դեպի վերջավորությունները փռվող ու բարձրացվող: Որպես կանոն, աղեղների ծայրերին ագուցված են բրոնզե ձևավորված պահպանակներ (շապիկներ), որոնք ոչ միայն գեղեցկություն ու ամրություն են տվել աղեղներին, այլև դրանցում արված հատուկ անցքերում ամրացվել են աղեղի լարերը և դարձել ահարկու:

Ուշագրավ են նաև փայտե կապարճները, որոնք հավանաբար պատված են եղել կաշվով կամ մորթիով: Սրանցում դրված են եղել նետասլաքներ՝ ծայրակալներով դեպի վեր, որը դարձյալ փոխում է նախկին պատկերացումները:

Կապարճներն ու աղեղները հայտնաբերվել են մ.թ.ա. 18-17-րդ դարերին պատկանող իրերի հետ և ժամանակագրվում են նույն դարերով:

Ջարմանալի նմանություն ենք տեսնում Մովսես Խորենացու նկարագրած Հայկյան հսկա աղեղի և Լճաշենյան աղեղների միջև: Լճաշենյան աղեղներն ու կապարճները առավել զարգացած ռազմական արվեստի կատարելության հասած նմուշներ են, որոնց նմանակը վերջերս հայտնաբերվեց Եղեգնածորի քարանձավներից մեկում:

Դրանց փաստորեն լրացնում են լանջապանակները, կրծքազրահները, որոնցից Լճաշենում գտնվել են երեք հատ: Մինչև վերջերս հայտնի էին Գոլովինոյից և Արթիկից գտնված լանջապանակները, որոնք վերաբերում էին մ.թ.ա. 9-7-րդ

դարերին:

Լճաշենից հայտնաբերվածը անհամեմատ հին է, վերաբերում է մ.թ.ա. 14-13-րդ դարերին: Դրանք գտնվել են քառանիվ փայտե սայլ պարունակող նո. 8 դամբանաբուրգից, և ամենայն հավանականությամբ կրել են ցեղապետերը և ռազմական առաջնորդները:

Կարևոր նորույթ են նաև դիապահպանակները, որոնք հայտնաբերվում են միայն Սևանի ավազանից, հատկապես Լճաշենից: Դրանք փայտե կերտվածքներ են, նման են հայկական թոնրատներում դրվող քուրսիներին, սակայն ունեցել են այլ նշանակություն: Դրվել են դամբարանափոսում թաղված ննջեցյալի վրա՝ ապահովության համար:

Եվ, վերջապես, մի կարևոր փաստ ևս կուզենայինք նշել: Լճաշենի տոհմացեղային ավազանու ներկայացուցիչների թաղումները խստորեն տարբերվում են շարքային տոհմիկների թաղումներից: Ավազանու գերեզմանները իրենցից ներկայացնում են հսկայական դամբանաթմբեր, թաղման ընդդեմ սրահներով, որտեղ դիակառքի հետ զետեղվում են արտոնյալների աճյունները՝ իրենց պատկանելիք արդ ու զարդով, հանդերձանքի և սպառազինության առաջնակարգ իրերով ու բազմահարուստ նյութերով: Այս տիպի դամբարանները, թաղման ծեսերն ու արարողությունները միանգամայն նման են ավելի ուշ շրջանից մեզ հայտնի հայ թագավորների թաղումներին:

Բերված փաստերը եզակի չեն, կարելի է բերել շատ օրինակներ, որոնք անժխտելի իրողություններ են: Փաստական նյութը այնքան հարուստ է ու բազմազան, որ դրանով կարելի է լիարժեք գաղափար կազմել Սևանի ավազանի հնագույն մշակույթի դերի ու նշանակության մասին, և, որ ամենից կարևորն է, հնարավոր կլինի դրանցով լուսաբանելու այդ մշակույթը ժառանգողների ու հետագա կրողների ծագումնաբանության հարցերը:

Պեղումներից ձեռք բերված նյութերի գիտական ուսումնասիրություններով պարզվել է, որ Լճաշենի հնաբնակը, գտնվելով բնակլիմայական նպաստավոր պայմաններում, ունենալով հարուստ բարեբեր հող, անտառներ, արոտավայրեր, ջրի ու քարի մեծ պաշար, վարելով նստակյաց կյանք, բազմակողմանի կապերի մեջ լինելով հարևան ու հեռավոր երկրների հետ, մ.թ.ա. 2-դ հազարամյակում բարձր զարգացման է հասցրել տնտեսության մի շարք կարևոր ճյուղեր՝ անասնապահությունը, երկրագործությունը, բրուտագործությունը, մետաղամշակությունը, փայտամշակությունը: Առկա են եղել նաև տնտեսության օժանդակ ճյուղերը՝ որսորդությունը, ձկնորսությունը: Տնտեսության զարգացման հետ են կապված արհեստների բաժանվելը մյուս զբաղմունքներից և արվեստի զարգացումը: Հանդես են եկել զինագործությունը, ոսկերչությունը, արձանագործությունը և այլն:

Արտադրության ուժեղացմամբ (անասնապահություն, երկրագործություն, մետաղամշակություն, խեցեգործություն, փայտամշակություն) հնարավորություն ստեղծվեց ավելի շատ արդյունքներ ստանալու, քան այն, ինչ որ պետք էր նրանց ապրուստի համար: Արտադրանքի ավելցուկը աստիճանաբար կենտրոնանալով ավելի ազդեցիկ մարդկանց՝ տոհմավազների, ռազմական առաջնորդների ձեռքին, նպաստեց հասարակական նոր հարաբերությունների ձևավորման պրոցեսին: Միաժամանակ այդ հանգամանքը պետք է խթաներ տարածքային ամբողջ-

ջականության կազմավորմանը, որը ինչ-ինչ պատճառներով չիրականացավ, ավելի շուտ՝ ընդհատվեց կազմավորման պրոցեսում: Սակայն առաջացել էին հզոր ցեղային միություններ, որոնք ուժեղ դիմադրություն ցույց տվեցին Ուրարտական ստրկատիրական պետությանը, երբ սկսվել է հայկական բարձրավանդակի ցեղերի ու ցեղային միությունների միավորումը մի ընդհանուր պետության կազմում:

Լճաշեն գյուղի ուրարտական սեպագիր արձանագրության մեջ նշված է.

«Խալդյան մեծությամբ Արգիշտին ասում է.

Գրավեցի Կիեխունի քաղաքի երկիրը, հասա Իշտիկունի քաղաքի երկիրը, Լճի (շանու) կողմը, Լիկիու երկրի կողմը:

Արգիշտին, հզոր թագավորը, Բիաինիլի երկրի թագավորը, Տուշպա քաղաքի կառավարիչը»:

Կիեխունի քաղաքը եղել է Սևանի թերակղզու և Ցամաքաբերդ գյուղի տարածքում, իսկ երկիրը նրանից հյուսիս:

Իշտիկունի քաղաքի ավերակները գտնվում են Լճաշեն գյուղում, որը ներառել է նաև Կիկլոպյան ամրոցը:

Սևանի ավազանը միանգամից չի ներառնվել Ուրարտական պետության կազմի մեջ:

Արգիշտիից հետո Սարգուր թագավորի զորքերն են հարձակվել Սևանի բնիկների վրա, որի վերաբերյալ Մարտունի շրջանի Ծովինար գյուղի սեպագիր արձանագրության մեջ ասվում է.

«... Սարգուրին ասում է... միայն մեկ ջոկատով () ռազմաերթով ելա դեպի Վելիկուխի երկիրը, 2 ամրացված միջնաբերդեր մարտում են նվաճեցի, ամրոցներ քանդեցի, քաղաքներ հրկիզեցի, երկիրն ավերեցի, տղամարդկանց (և) կանանց են քշեցի Բիաինիլի երկիրը:

Սարգուրին ասում է. «Իմ առաջ ներկայացավ Վելիկուխի երկրի թագավոր Նիդինինը, ընկավ երեսնիվայր, ես նրան (իմ) ստրուկը դարձրի, խնայեցի ես նրան հարկ վճարելու պայմանով, Սարգուրի թագավորին հարկ վճարելու պայմանով»:

Արձանագրությունում նշված Նիդինին թագավորը պետք է լիներ ցեղային միության առաջնորդը, որը հարկատու դառնալուց հետո փորձել է անկախանալ և ապստամբել է: Այդ է պատճառը, որ Սարգուրի որդի Ռուսան թագավորին փոխում է և նշանակում փոխարքա: Այդ մասին Գավառ քաղաքի Բարդի գլուխ կոչվող ամրոցի արձանագրության մեջ նշված է.

«Խալդ աստծո հզորությամբ Ռուսան, Սարգուրի որդին ասում է. Վելիկուխի երկրի թագավորին ես հաղթեցի (իմ) ստրուկը ես (նրան) դարձրի, երկրից ես (նրան) հեռացրի, (իմ փոխարքան (մարզի կառավարիչ) այնտեղ ես դրեցի Խալդի դուռն (և) վեհապանձ () ամրոց ես կառուցեցի, անունը (նրա համար) դրեցի «Խալդի աստծո քաղաք»:

Ես նրան կառուցեցի Բիաինիլի երկրի հզորության համար (և) հակառակորդի երկրին զսպելու ():

Ռուսան՝ Սարգուրի որդին, հզորագույն, որը Բիաինիլի երկիրն է կառավարում»:

Այստեղ հետաքրքիրն այն է, որ զորքի մասին ոչ մի խոսք չկա, կարելի է ենթադրել, և դա իրոք այդպես է, որ Սևանի ավազանի ցեղերը եղել են ազգակից ցե-

ղեր, որոնք թեև դիմադրությամբ, բայց միավորվել են հայկական լեռնաշխարհում իրենց իսկ ցեղակիցներից կազմավորված հզոր պետության կազմում:

Չնայած այն բանին, որ մեկուկես դար շարունակ Սևանի ավազանում կատարվում են հնագիտական պեղումներ և հսկայական նյութ է կուտակված, բայց դեռևս կան մեծ թվով հուշարձաններ, որոնք նոր են հայտնաբերվում և որոնցից գտնված նյութերը նոր հիմնահարցեր կարող են լուսաբանել:

ДРЕВНЕЙШАЯ КУЛЬТУРА ЛЧАШЕНА

В. В. Аветян

Древнейшая культура бассейна оз. Севан, особенно Лчашена, давно известна в широких научных кругах.

Из бассейна оз. Севан, а также с Гегамских и Варденийских гор окаймляющих его, были обнаружены тысячи памятников, относящихся к периоду начиная с каменного века (VII тысяч, до н. э.) до позднего средневековья.

Общеизвестны обнаруженные из Лчашена и относящиеся к бронзовому веку двухколесные и трехколесные повозки, колесницы, луки, музыкальные инструменты, короны и остатки грудного панциря, кухонные вещи, бронзовые кинжалы, мечи, палицы, секиры, наконечники копий и дротиков, скульптуры животных и птиц, предметы роскоши, изготовленные из золота, серебра и бронзы, двухцветная и трехцветная глиняная посуда, имевшая также ритуальное значение, обнаруженные из разных мест зооморфные скульптуры, о которых в обобщенной форме изложено в нашей монографии «Культура бассейна Севана в III-II тысяч до. н. э.». Однако, еще обстоятельно не изучены искусство наскальных изображений и проблемы связанные с металлургией.

THE ANCIENT CULTURE OF LCHASHEN

V. V. Avetyan

The ancient culture of Sevan basin, especially the culture of Lchashen, has been known in the scientific framework for a long time, but there are particular facts with the help of which the role and importance of that culture is more essential.

In the Sevan basin and the Geghama, Vardenis mountains, there have been discovered thousands of monuments concerning from the Stone Age to the late Middle Ages and all times. But a part of them hasn't been properly scientifically studied.

The two-wheeled, four-wheeled wooden carts and war chariots of Bronze Age, bronze daggers, swords, maces, sacres, zoo-morphic and bird-like statuettes, luxury things made of gold, silver and semi-precious stones, fish-like and bull-like “dragon-stones”, two-coloured and three-coloured earthenware crockery, earthenware jugs of ritual importance are well-known. But some results of the rockery-painting art and questions concerning metal-cultivation haven't been a subject of special studies.

About them in detail is written in the monograph named “The Culture of the Sevan Basin in III-II Millennium B.C.”, a brief idea of which is given by this work.